Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԵՎԻԿ ԽՆԿՈՅԱՆԻ՝ Ք. ԲՈՒԴԱՊԵՇՏ (ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արևիկ Խնկոյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հունգարիայի Հանրապետություն, ք. Բուդապեշտ, նոյեմբերի 26-ից 29-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի ազգային կոնտակտային անձանց հանդիպմանը, ինչպես նաև Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի տարածաշրջանային նորարարությունների 10-րդ տարելիցին նվիրված գիտաժողովին:

6. Քննարկված թեմաները

1. Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի գործունեությունն՝ ուղղված ձեռնարկատիրական հմտությունների և կրթության զարգացմանը, ինովացիոն ներուժ ունեցող հետազոտությունների և մշակումների իրականացմանը և բիզնեսի ստեղծմանն աջակցությանը:
2. Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի ռազմավարությունը և համակարգի կլաստերները:

3. Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի մրցույթները՝ նախատեսված համատեղ գիտահետազոտական և ինովացիոն նախագծերի իրականացմանն աջակցությանը: Մրցույթներին մասնակցության պայմանները:

4. Ինստիտուտի շրջանակում Եվրոպական երկրներում տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների աջակցության մեխանիզմը (deep tech talent initiative):

5. Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի և Եվրոպական ինովացիոն խորհրդի միջև եղած կապերը և սիներգիան:

6. Այլ ընթացիկ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման շրջանակներում հանդիպում է եղել Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի քարտուղարության և ազգային կոնտակտային անձանց հետ: Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչը ներկայացրեց ինստիտուտի հիմնական ծրագրերը, նախաձեռնությունները և վերջին թարմացումները: ԵՄ անդամ և ասոցացված երկրների ներկայացուցիչները պարզաբանումներ ստացած ծրագրերին մասնակցության և այդ ընթացքում առաջացող խնդիրների վերաբերյալ:

Ներկայացվեցին Գիտելիքի և ինովացիաների տարբեր ոլորտների համայնքները, որոնք միավորում են ակադեմիան, հետազոտությունները և բիզնեսը՝ ստեղծագործության, ինովացիաների և ձեռներեցության զարգացման համար և առաջարկվեց ռազմավարական ծառայությունների և խնդիրների արդյունավետ լուծումներ: Գիտելիքի և ինովացիաների համայնքներն ընդգրկում են հետևյալ ոլորտները. սնունդ, առողջություն, տիեզերք, թվայնացում, էներգիա, մշակող արդյունաբերություն, հումք և այլն: Նշված համայնքների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց ծրագրերը և կոնկրետ ոլորտներում հաջողությունները:

Քննարկվել են նաև մշակվող տեխնոլոգիաների պատրաստիության մակարդաների բարձրացմանն ուղղված ծրագրերը, որոնք համեմատելի են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերվող Փորձարարական մշակումների նախագծերի մրցույթների հետ:

Քննարկվել են նաև մի շարք օրակարգային և աշխատանքային հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի կողմից պարբերաբար շրջանառվող տեղեկատվությունը նոր բաց մրցույթների վերաբերյալ շրջանառել գիտական համայնքի հավանական շահառուների շրջանակում, հետաքրքրության դեպքում նրաց ուղղորդել և տալ համապատասխան խորհրդատվություն:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակիցների կողմից առաջարկվեց դիտարկել տարբեր երկրներում Գիտելիքի և ինովացիաների համայնքների գրասենյակներ բացելու հավանականությունը, սակայն ԵՄ ներկայացուցիչը նման մեխանիզմը համարեց ոչ արդյունավետ և առաջարկեց համայնքների հետ աշխատել անմիջապես:

Քարտուղարության կողմից առաջարկություն ներկայացվեց անդամ կամ ասոցացված երկրներում 2025 թվականին կազմակերպել տեղեկատվական օրեր կամ այլ միջոցառում, որտեղ կներկայացվեն Նորարարության և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտի ծրագրերը, դրանց մասնակցության հնարավորությունները և դիմելու ընթացակարգերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Խնկոյան

04.12.2024թ.